

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՐ-ԱՐԱՔՍՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՌԻԳՂԱՆԿՅՈՒՆ ՀԱՏԱԿԱԳԾՈՎ ԿԱՑԱՐԱՆՆԵՐԸ ԵՎ
ՆՐԱՆՑ ՏԱՐԱԾՄԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ա. Վ. ԳՆՈՒՆԻ

Բնակարանաշինությանն առնչվող հարցերի ուսումնասիրությունը հնագիտության կարևորագույն խնդիրներից է, որը փաստագրական տեղեկություններ է պարունակում տվյալ հասարակության սոցիալ-տնտեսական կառուցվածքի, էթնիկական տեղաշարժերի և տարածաշրջանի բնակլիմայական պայմանների մասին: Ներկայացվող հոդվածը նվիրված է Հայաստանի վաղ բրոնզի դարի (մ. թ. ա. IV հազ. կես— մ. թ. ա. III հազ.) ճարտարապետության որոշ հարցերի:

Նկատի ունենալով արծարծվող հարցերի լայն ընդգրկումը՝ այն համակողմանի դիտարկելու նպատակով նպատակահարմար ենք գտնում առանձնացնել հիշյալ խնդրի լուսաբանմանը նպաստող հետևյալ հատկանիշները:

Ա) Բնակավայրի տեղագրությունն ու ֆիզիկա-աշխարհագրական բնութագիրը՝ դիրքը բնական միջավայրում, բնակավայրերի խտությունը մեկ ամփոփ տարածքում, բնակավայրի միջինացված շափերը: Որպես լրացուցիչ գործոն կարելի է շեշտել ջրավազանի առկայությունը և բնակավայրերի միջև եղած միջին տարածությունները:

Բ) Բնակավայրերի պաշտպանվածությունը: Ամրացված բնակավայրերում պետք է քննել պաշտպանական համակարգը (պարիսպ, խանդակ, գաղտնուղի) և շինարվեստը (շինանյութը, կառուցման տեխնիկան):

Գ) Բնակավայրերի հատակագծային հորինվածքը՝ կառուցապատման բրնույթը, ազատ տարածությունների և փողոցների առկայությունը, բնակարանների տեղադրման միջին խտությունը: Որպես լրացուցիչ նյութ կարող է ծառայել պաշտամունքային կառույցների առկայությունը, բնակելի և տնտեսական շինությունների տոկոսային փոխհարաբերությունը:

Դ) Կացարանների ծավալատարածական առանձնահատկությունները (վերգետնյա, կիսագետնափոր, գետնափոր), սենյակների գործառական դերը և դրանց քանակը:

Ե) Կացարանների հատակագծային առանձնահատկությունները: Ներքին բակերի և տնտեսական հորերի առկայությունը:

Զ) Կացարանների շինարարական արվեստը՝ բնակարանների պատերի և ծածկի ձևերն ու կառուցվածքը, սյուների և հիմքերի առկայությունը: Շինանյութը՝ քար, հում աղյուս, կավ՝ ծղոտե կամ փայտե հիմնակմախքով, դրանց համատեղ օգտագործումը: Կարելի է շեշտել քարատեսակը, քարի և աղյուսի շափերը և այլն:

Է) Կացարանի ներքին հարդարանքը՝ օջախի, նստարան-մաստաբանների, պաշտամունքային խորշերի և առկայությունը, և դիրքը: Պաշտամունքային և կենցաղային իրերի (աշխատանքային ըորժիքներ, անոթներ) տեղը:

Կուր-արաքսյան մշակույթի բնակարանաշինության հարցերը, բազմիցս արծարծվել են հնագիտական գրականության մեջ¹: Վերջին տարիների պեղումների արդյունքները հնարավորություն են ընձեռում լրացնել մեր պատկերացումները կուր-արաքսյան մշակույթի կացարանների ձևերի, դրանց տարածման սահմանների և ժամանակագրական ընդգրկման մասին: Ներկայացված հատկանիշների համալիր ուսումնասիրումը խիստ արդիական և հրատապ խնդիր է, սակայն այն մեկ հոդվածի սահմաններում տեղի սղության պատճառով հնարավոր չէ կատարել: Հոդվածը հիմնականում նվիրված է կուր-արաքսյան մշակույթի՝ հատակագծում ուղիղ անկյուններ ունեցող կառույցներին: Դրանք են. 1) երկարուկ, 2) քառակուսի, 3) կլորացված անկյուններով կացարանները:

Հատակագծում ուղղանկյուն հորինվածքով կացարանները հայտնի են դեռևս նեոլիթից՝ Չոյունու-թեփեսի (մ. թ. ա. VII հազ.) և Մասիսի բլուր բնակավայրերը²: Ավանդույթը շարունակվում է էնեոլիթյան ժամանակաշրջանում: Մ. թ. ա. V հազ. համանման հատակագծով կացարաններ են հայտնաբերված Ալիքեմեկթեփեսի³, Աղվեսի բներ և Տերտեբի ձոր բնակավայրերից⁴: Քառանկյուն հատակագծով կացարաններ են հայտնաբերվել նաև Ադաբլուր (Կղզյակ բլուր) բնակավայրում⁵: Վաղ բրոնզի դարաշրջանում քառանկյուն հատակագծով շինություններ հանդես են գալիս կուր-արաքսյան մշակույթի վաղագույն փուլերից: Դրա վառ օրինակն է Մոխրաբլուր բնակավայրի ստորին, 11-րդ շինարարական հորիզոնում պեղված երկայնական պատը⁶:

1. Ուղղանկյուն երկառուկ հատակագծով կացարաններ: Սրանք կարելի է բաժանել երկու ենթախմբի: Առաջին ենթախմբին են պատկանում առանձնացված մեկ սենյակից բաղկացած կացարանները, ինչպիսիք են Հառիճի, Ամասիայի, Գորների, Շիրակավանի, Կառնուտի բնակավայրերում պեղվածները, ինչպես նաև՝ Սղնախներ բնակավայրի թ. 1 կացարանը: Սրանք զբաղեցնում են 35-ից (Սղնախներում) 42 քառ. մ. (Հառիճում) տարածք⁷:

¹ Տե՛ս Ա. Ի. Джавахишвили, Архитектура и строительное дело Южного Кавказа в 5—3 тыс. до н. э. Тб., 1975. К. Х. Кушнарева, Т. Н. Чубинишвили, Древние Культуры Южного Кавказа. Л., 1971. Т. II. Чубинишвили, К Древней истории Южного Кавказа. Тб., 1975. Р. М. Мунчаев, Древнейшая история северо-восточного Кавказа.— Материалы и исследования по археологии СССР (далее МИА). т. 100, М.-Л., 1965. Р. М. Мунчаев, Кавказ на заре бронзового века. М., 1975. В. М. Массон, Средняя Азия и Древний Восток. М.-Л., 1971. Ch. Barney, D. M. Lang, The peoples of the hills. N. Y., 1971, Дж. Мелларт, Древнейшие цивилизации Ближнего Востока, М., 1982:

² Տե՛ս Дж. Мелларт. Ըշվ. աշխ., էջ 186, Ch. Barney, D. M. Lang, op. cit. p. 25, Մասիսի բլուր նեոլիթյան բնակավայրը հետազոտվել է 1986 թ. ԵՊՀ հայագիտական հետազոտությունների կենտրոնի արշավախմբի կողմից (ղեկ. Գ. Ե. Արեշյան):

³ Տե՛ս Փ. Ր. Махмудов, Раскопки верхних горизонтов энеолитического слоя поселения Аликемектепеси.—Археологические и этнографические изыскания в Азербайджане (далее АЭИА). 1975, Б., 1975, էջ 14—16. Փ. Ր. Махмудов, И. Г. Нариманов, Раскопки холма Аликемектепеси—АЭИА. 1973, Б., էջ 12—13:

⁴ Տե՛ս Ս. Հ. Սարդարյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Եր., 1967, էջ 148, 147:

⁵ Տե՛ս Գ. Ե. Արեշյան, Ադաբլուրի պեղումները, ՀՀ 1989—1990 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան (զեկուցումների թեզիսներ), (այսուհետև՝ թեզիսներ), Եր., 1991, էջ 10:

⁶ Տե՛ս Գ. Արեշյան, Հ. Սիմոնյան, Գ. Սարգսյան, Գ. Քոչարյան, Հ. Օհանյան, Հայագիտական կենտրոնի 1977—1978 թթ. դաշտային հնագիտական աշխատանքները, «Բանքեր Երևանի համալսարանի», 1979, թ. 2, էջ 207:

⁷ Տե՛ս Т. С. Хачатрян, Древняя культура Ширака. Е., 1974. էջ 34—35. 36. Л. А.

Մեկ սենյակ ունեցող կացարաններ են պեղված նաև Մցխեթի Ամիրանիս Գորա բնակավայրում, որը գտնվում է Ախալցխա քաղաքից 2,5 կմ. դեպի հյուսիս-արևելք, Փոցխով գետի ձախ ափին: Ըստ Ք. Ն. Զուրինիշվիլու, բնակավայրն ունեցել է դարավանդային կառուցապատում, ընդ որում՝ բլրի գագաթը զերծ է կառուցապատումից և, հավանաբար, օգտագործվել է որպես հրապարակ կամ էլ փարախ: Հարկ է նշել նաև նեղ և երկար կառույցների առկայության փաստը Ամիրանիս Գորայում: Դրանք են, այսպես կոչված, «երկար տները», որոնք օգտագործվել են որպես անասնագոմ: Կասկածի տակ առնելով այդ վարկածը՝ Ա. Ի. Զավախիշվիլին նշում է, որ հրապարակված հատակագծերում հստակ չի երևում կենտրոնական հրապարակը, և, բացի այդ, պեղված է բնակավայրի աննշան մասը, ինչը թույլ չի տալիս անվերապահորեն համաձայնել այդ կարծիքի հետ: Ինչ վերաբերում է բնակավայրի դարավանդային կառուցվածքին, ապա, անշուշտ, հարկ է համաձայնել Ա. Ի. Զավախիշվիլու այն պնդմանը, որ հաշվի առնելով պեղված հատվածի բարձրությունը (15 մ.), ինչպես նաև դարավանդների միջև տարածությունը (2,5 մ.) դժվար է ենթադրել, որ ստորին դարավանդի կացարանի կտորը ծառայել է վերին դարավանդի կացարանի համար որպես բակ, ինչը, ըստ Ա. Ի. Զավախիշվիլու, դարավանդային կառուցապատման հատկանշական գծերից մեկն է: Ա. Ի. Զավախիշվիլին համոզիչ չի համարում նաև այն կարծիքը, որ բնակավայրում գոյություն են ունեցել երկու տիպի կացարաններ՝ քառակուսի և ուղղանկյուն⁹:

Կացարանների հաջորդ տիպը երկսենյակ և բազմասենյակ համալիրներն են: Նման համալիրներ մեզ հայտնի են Հոռոմի և Քեթիի բնակավայրերի պեղումներից, ինչպես նաև՝ Սղնախներից թ. Չ կարացանը: Համալիրների ընդհանուր հատակագիծը մոտենում է քառակուսու, իսկ առանձին սենյակներ հաղորդակցվում են դռների միջոցով: Ըստ Ա. Ի. Զավախիշվիլու, երկսենյակ համալիրներ եղել են նաև Ամիրանիս Գորայում: Դրանք են թթ. 13, 14, 22 և 24 կացարանները¹⁰: Ուղղանկյուն հատակագծով կացարաններ հաստատագրված են նաև Քեթիի ձախ բնակավայրում: Բնակավայրը գտնվում է Զիչիվա գետի կիրճում, Քեթիի ձախ շրջկենտրոնից 5—8 կմ. հեռավորության վրա: Հաստատագրված է երեք շինարարական շրջան: Ուղղանկյուն կացարանները պեղված են ստորին հորիզոններում: Կացարանների երկարությունը 8—10 մ. իսկ լայնությունը 4—5 մ.: Այլ ուղղանկյուն կառույցներից հարկ է նշել Ախալքալաքի Ամիրանիս Գորայում և Սաշխերեի մոտ գտնվող Ալգետա բնակավայրում պեղված շինությունները¹¹: Նշված խմբի կացարաններին մոտ են կանգնած Կարագում (Կահրամանլար) պեղված կայարանները: Կարագ բնակավայրը գտնվում է էրզրում քաղաքից 16 կմ. հյուսիս-արևելք և Իլիթլար գյուղից 8 կմ. հյուսիս: Կառույցները քառանկյուն

Петросян, Раскопки памятников Кети и Воскеаска. Е., 1989, էջ 11, 13, նկ. 2, Р. М. Торосян, Л. А. Петросян, Этапы развития Ширакаванского поселения.—В кн.: Культурный прогресс в эпоху бронзы и раннего железа (далее КБОБРЖ) Е., 1982, էջ 147. Р. С. Бадалян, Раннебронзовая культура Ширака. Автореферат дис. канд. ист. наук. Е., 1986, էջ 7:

⁹ Տե՛ս Կ. Խ. Կուշնարեա, Դ. Ո. Կլբիննիվիլու, Աշխ., էջ 65—66, նկ 21 (ա, 8), նկ. 22 Դ. Ո. Կլբիննիվիլու, Աշխ., էջ 55:

⁹ Տե՛ս, Ա. Ո. Դձախինիվիլու, Աշխ., էջ 153—154, 157:

¹⁰ Տե՛ս Դ. Ս. Խաչատրյան, Աշխ., էջ 37, Լ. Ա. Պետրոսյան, Աշխ., էջ 14—15, նկ. 3, էջ 28, նկ. 6, Ք. Ս. Բադալյան, Աշխ., էջ 8, Ա. Ո. Դձախինիվիլու, Աշխ., էջ 157:

¹¹ Տե՛ս, Դ. Ո. Կլբիննիվիլու, Աշխ., էջ 49—50, 76, Ա. Ո. Դձախինիվիլու, Աշխ., էջ 193:

են, աղյուսաշեն, քարե հիմքի վրա: Պատերը հաստատագրվում են միայն 12-րդ և 15-րդ շինարարական հորիզոններում¹²: Ուղղանկյուն կացարանների շինարարության ավանդույթը երևան է գալիս նաև Եփրատի վերին հոսանքում: Պուլուր (Սաքյուլ) բլուր— բնակավայրը գտնվում է Արածանիի գետաբերանից 4 կմ. հյուսիս: Կացարանները տեղադրված են բլրի պարագծով, ներքին և արտաքին շարքերով: Արտաքին շարքում տեղադրված կացարանները դեպի դուրս ելք չունեն, այլ հաղորդակցվում են ներքին շարքի կացարանների հետ միջանցքի կամ նախամուտքի միջոցով: Կացարանները տեղադրված էին բլրի լանջերին, իսկ բլրի գագաթը նախատեսված էր ընդհանուր օգտագործման համար: Համալիրները բազմասենյակ են: Կացարանների պատերը աղյուսաշար են, կանգնեցված մեկշարք քարով շարված հիմնապատի վրա: Ռադիո-ածխածնային անալիզի տվյալներով V շերտը թվագրվում է մոտավորապես մ. թ. ա. 2350 թ., VIII շերտը՝ մ. թ. ա. 2470 թ.: Հավանաբար X շերտը պետք է թվագրվի մ. թ. ա. 3000 թ.¹³: Պուլուրին նման են նաև Գելենջիկթեփե բնակավայրի (գտնվում է Պուլուրից 60 կմ. հարավ-արևմուտք, Մալաթիա քաղաքից մոտ 8 կմ. հյուսիս-արևելք), ինչպես նաև Դեղիրմենթեփեի 5-րդ և Թեփեջիկի 1 Շ շերտի շինությունների ճարտարապետությունը¹⁴: Հարկ է նշել, որ այս բնակավայրերը տեղադրված են հարթավայրային գոտում, սակայն իրենց հատակագծային առանձնահատկություններով մոտենում են Շիրակի և Մցխեթ-Ջավախքի բնակավայրերին: Վերջին տարիներին ուղղանկյուն հատակագծով կացարաններ հաստատագրված են նաև մշակույթի տարածման արևելյան շրջաններում՝ հերքելով այն տեսակետը, որ քառանկյուն շինությունը հատուկ է միայն մշակույթի տարածման արևմտյան շրջանների համար¹⁵: Այսպես, քառանկյուն ճարտարապետությամբ է բնորոշվում Շահլամա—2 ամրոցը Հայաստանի Նոյեմբերյանի շրջանում¹⁶: Ուղղանկյուն ճարտարապետությամբ է բնորոշվում նաև Ղարաքեփեկթեփե բնակավայրը՝ Ֆիզուլի քաղաքի հյուսիս-արևելյան ծայրամասում, Կենդելենչայ գետի աջ ափին: Վաղբրոնզեդարյան բնակավայրի վերին հորիզոնների կացարանները քառանկյուն էին, հավանաբար երկսենյակ: Կառուցման ժամանակ օգտագործվել է ինչպես հում աղյուս, այնպես էլ քար, հատակը՝ կավածեփ: Ցավոք, խիստ համառոտ նկարագրությունը թույլ չի տալիս հստակ որոշել շինությունների տիպը, սակայն հնարավոր է, որ այն մոտենում է Պուլուրի (Սաքյուլ) կացարաններին¹⁷: Ուղղանկյուն հատակագծով

¹² St'ya A. G. Sagona, The Caucasus region in the Early Bronze Age. Ox., 1984, P 1, p. 65—66, P 2, p. 249, P 3, map 8, К. X. Кушнарева, Т. Н. Чубинишвили, Гзվ. աշխ., էջ 67—68:

¹³ St'ya A. G. Sagona, The Caucasus region... P III map XI a site 226, Н. Z. Kosay, Pulur (Sakyol) excavations 1969. Keban project activities. 1969 (այսուհետև՝ Keban), Ankara, 1971, p. 104—105, pl. 73—75:

¹⁴ St'ya U. Esin, Tepecik excavations. Keban, 1969, p. 125, pl. 88 (2), Գուլնի. Tepecik and Tulin tepe, 1971, Anatolian Studies (այսուհետև՝ AS), vol. XXII, 1972, p. 30, A. G. Sagona, op. cit., p. 74—75:

¹⁵ St'ya A. И. Джавахишвили. Гзվ. աշխ., էջ 107:

¹⁶ St'ya, С. А. Есян, Древнейшая культура племен Северо-Восточной Армении, Э., 1976, էջ 21, աղ. 8:

¹⁷ St'ya Г. С. Исмаилов, О. А. Даниелян, Результаты археологических исследований в междуречье Гуручай и Кенделенчай в 1980—1981.—АЭИА 1980—1981. Б., 1986, էջ 76, Г. С. Исмаилов, О. А. Даниелян, Итоги исследования раннеземледельческих поселений в междуречьи Куручай и Кенделенчай в 1985.—АЭИА, 1985, Б., 1986, էջ 23, Ղարաքեփեկթեփեի 1994 թ. ճեռագրությունները՝ ՀՀ Հոշարձագի երի Պաֆ-

է: բնորոշվում նաև Գոդին թեփե բնակավայրը: Այդ տիպի կառույցները ի հայտ են գալիս բնակավայրի գոյության IV շրջանի I—V շերտերում: Հատկանշական է, որ այս շերտերի խեցեղենը նման է Յայնիկ թեփեի երկրորդ շերտի խեցեղենին: Ի դեպ, այս փաստը ստիպում է վերապահումով մոտենալ Չ. Բարնեյի այն տեսակետին, համաձայն որի քառանկյուն հատակագծով կացարանները առաջացել են քոչվոր ցեղերի նստակյաց դառնալու հետևանքով¹⁸: Ինչպես նշվեց, կացարանաշինության կապված հիմնահարցերը պարզաբանելիս կարևոր են բնակարանների ներքին հարդարանքի հետ կապված հարցերը: Նշված խմբի բնակարաններին հատկանշական են քարե նստարան-մաստաբաները: Այդպիսի նստարաններ կարելի է հանդիպել Սղնախների թ. 2, Քեթիի թ. 3, ինչպես նաև Պուլուրի կացարաններում¹⁹: Նշված խմբի հաջորդ հատկանիշներից մեկը կարելի է համարել քարի մեջ փորված քառակուսի փոսերը: Նմանօրինակ փոսեր կարելի է դիտարկել Հաճիոում, Ամասիայում, Սղնախների թ. 2 կացարանում, Շիրակավանում, Ամիրանիս Գորայում, Պուլուրում²⁰: Անդրադառնալով բնակավայրերի հատակագծային առանձնահատկություններին՝ հարկ է նշել, որ հիմնականում կացարանները տեղաբաշխված են բլրի պարագծով, ընդ որում՝ բլրի գագաթը ընդհանուր օգտագործման վայր է (սրբատեղի, հավաքատեղի և այլն): Նման երևույթ հանդիպում է Հառիճում, Քեթիում, Հոռոմում, Սղնախներում, Կրաքարի Սարում, Կարազում, Պուլուրում (Սաքյու), Շահլամայում, հավանաբար Ամիրանիս Գորայում, Ղարաքեփեթթեփեում²¹: Հարկ է նշել այն հանգամանքը, որ բոլոր այս բնակավայրերը գտնվում են բնական բլուրների վրա, այլապես անհնար կլիներ կենտրոնական հրապարակի առկայությունը: Նշված խմբի բնակավայրերը աչքի են ընկնում նաև մեծ չափերով. Կրաքարի Սարը զբաղեցնում է 4 հա., Գորները՝ 3 հա., Սղնախները՝ 5 հա., Հառիճը՝ 6 հա., Ամիրանիս Գորան՝ 12 հա. տարածք: Դրանց իրենց չափերով մոտ են նաև Եփրատի, հովտի բնակավայրերը²²: Սակայն այս հատկանիշը որևէ որոշիչ դեր չի խաղում, քանի որ նման մեծ չափերով են բնորոշվում նաև Պարսկաստանի տարածքում գտնվող Ամուլի դաշտավայրի և Պաղեստինի հուշարձանները²³: Այլ տարածաշրջաններում գտնվող ճարտարապետական զուգահեռներից հարկ է նշել Լեսբոս կղզում գտնվող Ֆերմի բնակավայրի I և II հորիզոնները: Բնակավայրը կազմված է մի քանի խումբ ուղղանկյուն կացարաններից, ո-

պանություն վարչության արշավախմբի. (ղեկ. Հ. Սիմոնյան, չափագրությունները Հ. Սա-
նամյանի):

¹⁸ Տե՛ս T. Young, Godin-tepe excavations. Royal Ontario Museum, Toronto, 1969, p. 10:

¹⁹ Տե՛ս Л. А. Петросян, *Ազգ. աշխ.*, էջ 16, 18, Н. Kosay, *op cit.*, p. 104:

²⁰ Տե՛ս Л. А. Петросян, *Ազգ. աշխ.*, էջ 17, Н. Kosay, *op cit.*, p. 104, Т. С. Хачатрян, *Ազգ. աշխ.*, էջ 35, 36—37, Т. Н. Чубинишвили, *Ազգ. աշխ.*, էջ 35:

²¹ Տե՛ս Л. А. Петросян, *Раннебронзовая...*, էջ 7, Т. С. Хачатрян, *Ազգ. աշխ.*, էջ 35, К. Х. Кушнарева, Т. Н. Чубинишвили, *Ազգ. աշխ.*, էջ 66, Н. Kosay, *op cit.*, p. 104, Л. А. Петросян, *Раскопки...*, էջ 11, 12, 13:

²² Տե՛ս Л. А. Петросян, *Ազգ. աշխ.*, էջ 11—13, 26, Т. С. Хачатрян, *Ազգ. աշխ.*, էջ 34, 44, 8, А. G. Sagona, *op. cit.*, P. II, p. 244, 252, 259, 262:

²³ Տե՛ս А. G. Sagona, *op. cit.*, P. II, p. 241—242, 247, 316, 326, 328, 331, 334, R. J. Braidwood, *Mounds in the plain of Antioch*. Oriental Institute Publications, vol. XLVIII, Chicago, 1937, pp. 1—7, 10—11, 24, 33, 37—39, 41—42, 49, map VII, site 126, map VIII, sites 177, 178, 196:

րոնք հովհարածև տարածվում էին մեկ միասնական կենտրոնից տարբեր կողմեր²⁴։

Նկարագրված խմբի բնակավայրերը ուսումնասիրելիս հարկ է քննել նաև խեցեղենի հետ կապված հարցերը։ Խեցեղեն նյութը չափազանց բազմազան է և ունի բազմաթիվ զուգահեռներ, ինչպես նշված խմբի այնպես էլ այլ վաղ-բրոնզեդարյան բնակավայրերում։ Այսպես, ցայտուն է նմանությունը Ամիրանիս Գորայի և Կարազի վաղ բրոնզ I շրջանով թվագրվող խեցեղենի միջև։ Բազմաթիվ զուգահեռներ կան նաև Պուլուրի և Կարազի խեցեղենի միջև, որոնք դիտարկվում են սկսած I-ից մինչև XI շերտերը։ Ընդ որում, ընդհանրությունները դիտվում են ինչպես կավանոթների երկրաչափական զարդանախշի, այնպես էլ թեմատիկայի մեջ։ Անդրադառնալով այլ զուգահեռներին՝ հարկ է նշել, որ կան որոշակի ընդհանրություններ Հառիճի, Կարազի և Ամիրանիս Գորայի խեցեղենի զարդանախշի միջև²⁵։ Հարկ է շեշտել Հառիճի օջախի մարդակերպ հենակների և Պուլուրի կուռքերի դիմագծային նմանությունը²⁶։ Այս ամենը հանգեցնում է այն եզրակացության, որ Մցխեթ-Ջավախքի հուշարձանների հիմնական զուգահեռները ընկած են ոչ թե Շիդա-Քարթլիում, այլ Շիրակում և Անատոլիայի հյուսիսարևմտյան շրջաններում²⁷։

2. Քառակուսի և քառակուսուն մոտեցող հատակագիծ ունեցող կացարաններ։ Այդպիսի ձև ունի Մոխրաբլուրի VIII շերտում հայտնաբերված ԿՊ. 33 շինությունը։ Այն կառուցված է հում աղյուսից (աղյուսի չափսերն են՝ 0,2 մ. × 0,22 մ. × 0,12 մ.)²⁸։ Հարկ է նշել, որ այս շինությունը դեռևս միակ հայտնի մեկուսի կանգնած քառակուսուն կառույցն է Արարատյան դաշտում, և հետազոտողների մեջ բացակայում է միասնական կարծիքը այդ կառույցի հատակագծի, ինչպես նաև օգտագործման եղանակի մասին։ Քառակուսի հատակագիծ ունեցող կացարանների մի փոքր խումբ գտնվում է Խարբերդի հովտում, Աթինովայի սարահարթում։ Այդպիսի բնակավայրերից մեկն է Խաչքան-մեքիին, որը գտնվում է Արածանի գետի աջ ափին, Եփրատին միախառնվելու վայրից համարյա 20 կմ. արևելք և թվագրվում է մոտ մ. թ. ա. 3000 թ.։ Այն 2,3 հա. տարածքով և 1,75 մ. պահպանված բարձրությամբ ձվաձև հատակագծով արհեստական բլուր է։ Հայտնաբերված կացարաններն ունեն համարյա քառակուսի հատակագիծ։ Շինությունները աղյուսաշեն են, քարե հիմքի վրա։ Կառույցներից մեկը բաղկացած է ներքին և արտաքին պատերից, որոնք առանձնացված են նեղ միջանցքով։ Նման տիպի կառույց առկա է նաև Քիրբեթ-Քերակ բնակավայրում²⁹։ Եփրատի վերին հոսանքում այդպիսի կացարաններ կարելի է հանդիպել Նորշունթեփե, Դեղիրմենթեփե, Քոռուշթեփե, Թեփեջիք բնակավայրերում։ Նշվածներից կենտրոնական դիրք է զբաղեցնում Նորշունթեփե (Ալիշամ-նորշիմ) բնակավայրը, որը գտնվում է սարահարթի կենտրոնական մասում, էլյազիգ քաղաքից 24 կմ. և Ալիշամ գյուղից 2 կմ. հարավ-արևելք։ Նշված տիպի շինություններ կարելի է հան-

²⁴ Տե՛ս Ю. В. Андреев, Островные поселения Эгейского мира в эпоху бронзы. М., 1988, էջ 35, նկ. 1։

²⁵ Տե՛ս К. Х. Купшарева, Т. Н. Чубинишвили. Гзл. աշխ., էջ 137, նկ. 24 (28—30, 40), նկ. 44 (67, 68, 1—11), Т. С. Хачатрян, Гзл. աշխ., նկ. 21, 22, 25, 29, 31 a, Н. Kosay, op. cit., p. 105։

²⁶ Տե՛ս Т. С. Хачатрян. Гзл. աշխ., նկ. 42, Н. Kosay, op. cit., pl. 76(1)։

²⁷ Տե՛ս А. И. Джавахишвили. Гзл. աշխ., էջ 159—160։

²⁸ Տե՛ս Գ. Արեշյան, Հ. Սիմոնյան, Գ. Սարգսյան, Բ. Քոչարյան, Հ. Օհանյան, Гзл. աշխ., էջ 202։

²⁹ Տե՛ս А. G. Sagona. op. cit., P. I, p. 71—72, P. II, p. 272, P. III, fig. 142, map 11 a, S. Helms Tuskan Mevkii. AS vol. XXII, 1972 p. 15—17, fig. 3. A. G. Sagona. op. cit., P. I, p. 73։

դիպել բնակավայրի XIX շերտում: Նման կառույցներ հանդիպում են նաև Քոռուշութեփեի XLV—LIV հորիզոններում և թվագրվում են վաղ բրոնզի առաջին փուլով: Նույն փուլով են թվագրվում նաև Հան Իբրահիմ Շահի VII շերտի կացարանները: Կացարանները կառուցված են հում աղյուսից քարե հիմքի վրա: Վերին շերտերում պատկերը մի փոքր այլ է. պահպանվել են սյունների խարխախների հետքեր³⁰: Սարահարթի այլ բնակավայրերում նշված կացարանները այդքան էլ երկար չեն գոյատևում: Նորշուռթեփեի XIX հորիզոնում դրանք հանդես են գալիս չհյուսածո հիմնակմախքով կացարանների հետ: Քննելով այդ տիպի կացարաններից պեղված խեցեղենը՝ կարելի է նշել դրա որոշակի նմանությունը Կարազի խեցեղենի հետ: Անդրադառնալով ճարտարապետական գուգահեռներին՝ պետք է ասել, որ Հան Իբրահիմ Շահի վերին հորիզոնների շինությունները որոշակի նմանություն ունեն Ադաբլուրի էնեոլիթյան բնակավայրի կառույցների հետ, թեև վերջիններիս վերակազմությունը այնքան էլ հստակ չէ³¹: Մշակույթի տարածման արևելյան շրջաններում քառակուսի հատակագծով կացարաններ հայտնի են Այգևան բնակավայրի վերին հորիզոններից, ինչպես նաև՝ Իրանում դոնվոդ Հաֆթվան-թեփեից³²: Քառակուսի հատակագծով կացարաններով են բնութագրվում նաև Յանիկ-թեփե բնակավայրի XIII—VII հորիզոնները, որոնց տրոսները հավանաբար եղել են երկհարկանի, հարկերը հաղորդակցվում էին սանդուղքի միջոցով: Ըստ Չ. Բարնեյի, բնակեցված են եղել ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ հարկերը: Պահպանվել են մաստաբանների հետքեր: Յանիկ-թեփեի կացարանները Չ. Բարնեյը թվագրում է վաղ բրոնզի II փուլով, իսկ, Կ. Քուշնարյովան՝ վաղից միջին բրոնզի անցման փուլով³³: Վաղ բրոնզի եզրափակիչ փուլով է թվագրում Ս. Սասյանը Այգևանի վերին հորիզոններում պեղված տները, իսկ Չ. Բարնեյը՝ Հաֆթվան-թեփեի կացարանները:

3. Կլորացված անկյուններով կացարաններ: Կուր-արաքսյան մշակույթում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում կլորացված անկյուններով տրոսները, որոնցից նախ և առաջ պետք է հիշատակել Մինգեշաուրի բնակավայրը, որ գտնվում է Կուր գետի ձախ ափին և զբաղեցնում է մոտ 21 հա. տարածք: Կացարանները գտնվում են Բոզդաղի կիրճի կենտրոնական մասում: Տներն ունեն կլորացված անկյուններով քառանկյուն հատակագիծ: Կառույցների երկարությունը տատանվում է 8—14 մ., իսկ լայնությունը՝ 4—8 մ.: Երկայնական պատերի երկայնքով նշմարվում են փայտե սյուները հետքեր: Պատերը կավածեփ են, կավածեփ է նաև հատակը, որը ծածկված է գետաքարերով և խեցեղենի բեկորներով: Բնակարանի կենտրոնական մասում նշմարվում են միջանցուկ պատի հետքեր, ինչպես Ամիրանիս-Գորայում: Կացարանները գրեթե գետնափոր են, առաստաղը հենված է եղել երկայնական և հավանաբար կենտրոնական սյան վրա: Այս տիպի տները շուրջ ուղղակի զուգահեռներ կուր-արաքսյան մշակույթի այլ բնակավայրերում, և դրանց կառուցումը կապվում է տեղի էնեոլիթյան ավանդույթների հետ³⁴:

³⁰ St' u A. G. Sagona. op. cit., P. I, p. 72, P. III, fig. 43, H. Ertem, Han Ibrahim Shah 1971, AS. vol. 22, p. 24:

³¹ Ադաբլուր բնակավայրի էնեոլիթյան շերտը ուսումնասիրվել է 1989 թ. ՀՀ ԳԱ Ռճագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբի կողմից (ղեկ. Գ. Ե. Արեշյան):

³² St' u Ch. Barney. D. M. Lang, The peoples of the hills pl. 22:

³³ St' u Ch. Barney. D. M. Lang, The peoples of the hills p. 65, 66 pl. 22, 23, A. G. Sagona, op. cit., P. I, p. 62, 64, P. III, fig. 137, K. X. Кушнарева, Т. Н. Чубинишвили, Գժվ. աշխ., էլ 93: Այգևանի վերաբերյալ նյութերը մեզ է տրամադրել Ս. Ա. Սասյանը, որի համար Քաջահունք ենք խորհն շնորհակալություն:

³⁴ St' u Г. М. Асланов, Р. М. Ваидов, Г. И. Понз. Древний Мингочаур. Б., 1959, էջ 21, 22. Т. Н. Чубинишвили, К древней истории Южного Кавказа, էջ 105:

Կլորացված անկյուններով քառանկյուն կացարանները որոշակի տարածում են գտնում Կուրի միջին հոսանքում՝ Շիդա-Քարթլիի ցածրադիր մասում: Դրանցից են Կվացխելեբին (Կվացխելա) և Խիզաննանթ-Գորան³⁵: Կվացխելա բնակավայրը գտնվում է Կուրի բարձրադիր ձախ ափին: Քառակուսի հատակագծով բնակավայրը հնում գրավել է մոտ 5600 քառ. մ. տարածք՝ գետի մակարդակից բարձրանալով մոտ 30 մ.: Տները տեղադրված են եղել ձախի շարքերով՝ կողմնորոշված հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք և հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք: Դժվար է նկատել, որ կացարանները տեղադրված են եղել մեկ առանցքի երկայնքով՝ շրջապատելով ոչ մեծ հրապարակները: Հատակագծման այս սկզբունքը կարելի է նկատել նաև Ֆերմի բնակավայրի IV շինարարական հորիզոնում, որ թվագրվում է մ. թ. ա. III հազ. II քառորդով: Վերջինիս առանձնահատկությունը այն է, որ տները իրար հետ հաղորդակցվել են³⁶: Կվացխելեբի կացարանները քառանկյուն են, փոքր-ինչ կլորացված անկյուններով: Դրանք լայնակի տնտեսական միջանցքով մեկասենյականոց բնակարաններ են: Սենյակը գրեթե քառակուսի է: Երեք կացարաններում լայնակի միջանցքը բացակայում է: Մուտքի դուռը գտնվում է կառույցի ճակատային մասում, իսկ միջանցքը և սենյակը միացնող դուռը՝ ուղիղ դրա դիմաց: Հետևի, իսկ երբեմն նաև կողքի պատերի երկայնքով տեղադրվել են 10—15 սմ. բարձրությամբ և 50—80 սմ. լայնությամբ մաստաբաներ: Կացարանի կենտրոնում դրվել է կավե օջախը, որի ետևում բարձրացող փայտե սյունը կրել է շինությունից հարթ ծածկը: Կառույցի կմախքը կազմվել է 8—10 սմ. տրամագիծ ունեցող փայտե ցցերից, որոնք խրվել են հողում, միմյանցից 18—20 սմ. հեռավորությամբ և ամրացվել են ճյուղերից հյուսված բարակ ցանցով (պատերի հաստությունը՝ 30—40 սմ.): Պատերը սվաղված են կավի 2,5 սմ. շերտով: Հատակը նույնպես կավածեփ է, որը կազմված է միմյանց հաջորդող 20 շերտերից, իսկ վերին շերտի վրա լցվել է մոխրի լուծույթ, որից հետո հատակը փայլեցվել է: Ծածկը կառուցվել է գերաններից, «հազարաշեն» տեխնիկայով և ապա ծեփվել կավով: Հարկ է նաև նշել, որ բնակավայրի տարածքում հյուսածո հիմնակմախքով կառույցների հետ մեկտեղ կա նաև ուղղանկյուն հում աղյուսով շինված երեք կառույց:

Կուրի ավազանի մյուս բնակավայրը՝ Խիզաննանթ-Գորան, նույնպես գտնվում է գետի բարձրադիր ափին, ներկայիս Ուրբնիսի գյուղի տարածքում, Կվացխելայից մոտ 2,5 կմ. արևելք: Թե ինչ տարածք է զբաղեցրել բնակավայրը հնում, դժվար է ասել: Ի տարբերություն Կվացխելայի, այս բնակավայրը ավելի երկար է գոյատևել: Պահպանվել են վաղ բրոնզեդարյան 6 հորիզոնների հետքեր, ինչը թույլ է տալիս ավելի ամբողջական պատկերացում կազմել կացարանների նկարագրված տիպի առաջացման, զարգացման և տարածման մասին: Բնակավայրի B շերտի ճարտարապետությունը բացարձակապես համընկնում է Կվացխելայի C1 շերտի ճարտարապետությանը: Որոշակի առանձնահատկությունները ճարտարապետությունում սկսում են դրսևավորվել բնակավայրի C1 շերտից: Այսպես, թ. 9 կացարանի պահպանված հարավարևմտյան անկյունն ունի շրջանի երեք քառորդի տեսք: Երկրորդ առանձնահատկությունը միջանցքի բաժանումն է երկու մասի: Մուտքը հավանաբար գտնվել էր միջանցքի կողքի պատերից մեկում: Մյուս առանձնահատկությունը կենտրոնական սյան բացակայությունն է: C շերտում կրկն

³⁵ Տե՛ս Ա. Ու. ԴձաՎախիՎիլի, Գշվ. աշխ., էջ 118—149, Կ. Ու. ՇուբինիՎիլի, Գշվ. աշխ., էջ 90, 95:

³⁶ Տե՛ս Կ. Ու. ԱնդրեՎ, Գշվ. աշխ., էջ 36, 37, Գկ. 2:

վում է նույն պատկերը, այն տարբերությամբ միայն, որ կառուցապատումը կատարված է բավական անփույթ: Հաջորդ՝ D հորիզոնում հանդես են գալիս կլոր հատակագծով կառույցներ, սակայն այստեղ էլ պահպանվել են ուղղանկյուն շինությունների որոշ հետքեր: Այսպես, թ. 16 կացարանի միջանցքն ունի գրեթե ուղղանկյուն տեսք: Բնակավայրի ամենահին շինարարական հորիզոնը E-ն է: Թեև այստեղ շինությունների մնացորդներ չեն պահպանվել, սակայն ըստ Յա. Կիկվիձեի, 1—1,5 մ. տրամագիծ ունեցող կլոր փոսերը կարելի է համարել կացարանների մնացորդներ³⁷: Հյուսածո հիմնակամախքով կավածեփ շինություններն են հայտնաբերվել նաև Գուդաբերտողա բնակավայրի վաղագույն շերտերում³⁸, հավանաբար նույն տիպի շինություններ է ունեցել նաև Բաբա-Գերվիշ բնակավայրը Ղազախ քաղաքի արվարձաններում (հայտնաբերվել են հավանաբար կացարանների հիմք յանդիսացող էլիպսաձև փոսեր, ինչպես նաև հարդախառն կավաշաղախ)³⁹: Համանման կացարանների հետքեր են պահպանվել նաև Օղնիում և Կուբակեբիում, շնորհիվ որում որոշակի զուգահեռներ կան նաև խեցեղեն նյութի միջև⁴⁰: Ա. Ի. Ջավախիշվիլին, վկայակոչելով ռադիոածխածնային անալիզի տվյալները, Կվածխելայի C1 և Խիզաննանթ-Կորայի B շերտերը թվագրում է մ. թ. ա. 2500 թ.: Կ. Քուշնարյովան առաջարկում է ավելի ուշ թվագրում՝ նըշված շերտերը բնութագրելով որպես վաղ բրոնզի վերջին փուլ: Նա նույն ժամանակաշրջանով է թվագրում նաև Բաբա-Գերվիշի երկրորդ շերտը: Այս կարծիքը Կ. Քուշնարյովան ամրապնդում է խեցեղեն նյութի զուգահեռներով: Ա. Սագոնան էլ նշված շինությունները թվագրում է վաղ բրոնզի երկրորդ փուլով՝ III հազարամյակի II կեսով: Համանման կառույցներ են հայտնաբերվել նաև կուր-արաքսյան մշակույթի տարածման այլ շրջաններում ևս: Այսպես, Դաղստանի համարյա բոլոր բնակավայրերում (Կայաքենդում, Վելիքենդում, Մամայկուտանում և այլն), որոնք գտնվում են Դաղստանի Դերբենդի շրջանի ծովափնյա մասում, հանդիպում են կավածեփ հիմնակամախքի հետքեր: Սալայն միայն մեկ՝ Մեկեղեի բնակավայրում է հաջողվել հաստատագրել շինությունների հետքեր: Այս բնակավայրը գտնվում է նախալեռնային գոտում: Տները կիսագետնափոր են, բոլորածե հատակագծով: Այս տիպին են պատկանում նաև Ինգուշեթիայում գտնվող Լուգովոյե բնակավայրի կացարանները, որոշակի նմանություն դրսևորելով Խիզաննանթ-Կորայի D շերտի որոշ կառույցների հետ⁴¹: Թվարկված բնակավայրերի առանձնահատկություններից մեկն էլ նրանց զբաղեցրած բավականաչափ փոքր տարածքն է⁴²:

Հյուսածո հիմնակամախքով, կլորացված անկյուններով, քառանկյուն հատակագծով կացարաններ երևան են գալիս նաև մշակույթի տարածման հարավարևմտյան շրջաններում՝ Նորչունթեփեի XIX—XVIII և Դեղինմենթեփեի III շերտերում: Նորչունթեփեի կացարանների յուրաքանչյուր պատի երկարությունը 6,5 մ. է: Պատերը կառուցված են հյուսածո հիմնակամախքով և կավածեփ են: Լայնակի միջանցքը բացակայում է, ինչպես Կվացխելայի որոշ

³⁷ Հղումը տե՛ս А. И. Джавахишвили, *Ազ. աշխ.*, էջ 146:

³⁸ Տե՛ս Т. Н. Чубинишвили, *Ազ. աշխ.*, էջ 98:

³⁹ Տե՛ս И. Г. Нариманов, Г. С. Исмаилов, Акстафачайское поселение близ г. Казаха. — Советская Археология, № 2, 1962, էջ 342, 343:

⁴⁰ Տե՛ս Т. Н. Чубинишвили, *Ազ. աշխ.*, էջ 95:

⁴¹ Տե՛ս А. И. Джавахишвили, *Ազ. աշխ.*, էջ 259, К. Х. Кушнарева, Т. Н. Чубинишвили, *Ազ. աշխ.*, էջ 100, ԱԿ. 44 (100—114 և 130—141), А. G. Sagona, *op. cit.*, P. I, p. 97, 98:

⁴² Տե՛ս А. И. Джавахишвили, *Ազ. աշխ.*, էջ 197, Р. М. Мунчаев, Кавказ на заре бронзового века. М., 1975, էջ 175, Р. М. Мунчаев, Древняя культура..., էջ 12, 46:

կացարաններում: Հայտնաբերվել են սյան խարիսխի հետքեր: Հարկ է նշել, որ նորշունթեփեում ևս, ինչպես նաև Կվացխելայի CI շերտի հյուսածո հիմնակմախքով տները, հարևանում են աղյուսաշեն քառակուսի կառույցներին⁴³:

Հյուսածո հիմնակմախքով կացարանների շինարարության ավանդույթը որոշակի զուգահեռներ ունի մշակույթի տարածման սահմաններից դուրս: Այսպես, նման շինարարական տեխնիկա կիրառվում էր Կիկլադյան կղզիախմբում մ. թ. ա. IV—III հազ. սահմանագլխում⁴⁴: Ինչ վերաբերում է այս տարածաշրջանի կացարանների ճարտարապետությանը, ապա այն հիշեցնում է «մեգարոնը», թեև հետո է թե՛ դասական մեգարոնից, թե՛ վերջինիս անատոլիական նմանակներից, սակայն դասական մեգարոնին մոտեցողը այն փաստն է, որ կառույցները բաղկացած են ոչ թե եռամաս (նախամուտք, բնակելի մաս և ծխական մաս), այլ երկմաս (նախամուտք և բնակելի մաս) բաժանմունքներից, որը հատուկ է անատոլիական մեգարոններին մ. թ. ա. III հազ. III և IV քառորդում: Նման կառույցներ հայտնի են Տրոյայից, Բեյջիսուլթանից, սակայն Անդրկովկասյան կառույցներին առավել հարազատ է Դանդուռթեփե բնակավայրը, որտեղ օգտագործվել է հյուսածո հիմնակմախքը⁴⁵:

Այսպիսով, ելնելով վերոշարադրյալից, կարելի է հանգել հետևյալ եզրակացության. վաղ բրոնզի դարում հատակագծում ուղղանկյուն հորինվածքով բնակարանների, շինարարությունը ոչ միայն չի ընդհատվում, այլև զարգացնելով վաղ ավանդույթները՝ շարունակում և ծավալվում է մշակույթը ընդգրկող ողջ տարածաշրջանում: Նույնիսկ կարելի է առանձնացնել հատակագծում ուղղանկյուն հորինվածքով կացարանների տիպերի տարածման սահմանները: Կլորացված անկյուններով քառանկյուն, կավածեփ հյուսածո հիմնակմախքով կացարանները տարածում են գտնում հիմնականում Կուրի միջին հոսանքում, Հյուսիսային Կովկասում և Եփրատի վերին հոսանքի առանձին բնակավայրերում: Քառակուսի հատակագծով կացարանների տարածման հիմնական շրջանը կարելի է համարել Եփրատի վերին ավազանը: Ինչ վերաբերում է ուղղանկյուն հատակագծով բազմասենյականոց համալիրներին, ապա դրանք տեղայնացվում են Շիրակի, Մցխեթ-Ջավախքի և Անատոլիայի հարավարևմտյան շրջաններում: Պակաս կարևոր չէ նաև այն փաստը, որ քառանկյուն ճարտարապետության ավանդույթների զարգացումը ընթանում էր մի քանի զուգահեռ ուղղություններով⁴⁶: Ցավոք, նյութի սակավությունը թույլ չի տալի հստակ որոշել կառույցների տեղագրական ժամանակագրական սահմանները, այդ թվում՝ Շիրակ-Քարթլիի հյուսածո հիմնակմախքով կացարանների հնարավոր ազգականությունը Եփրատի վերին ավազանում գտնվող հուշարձանների հետ և սրանց կապը անատոլիական հուշարձանների հետ կամ Շիրակի և Մցխեթի հուշարձանների հնարավոր կապը Մալաթիայի և Մշո դաշտի հուշարձանների հետ:

А. В. ГНУНИ — Прямоугольные здания куро-аракской культуры в Армении и их ареалы.— Вопросы изучения архитектуры и планировки жилищ, принадлежат к числу самых насущных в современной археологии, поскольку позволяют создать наиболее четкое представление

⁴³ Տե՛ս А. И. Джавахишвили, Գշվ. աշխ., էջ 104, Р. М. Мунчаев, Кавказ на заре бронзового века, էջ 174, 175:

⁴⁴ Տե՛ս Ю. В. Андреев, Գշվ. աշխ., էջ 50, 51:

⁴⁵ Տե՛ս А. И. Джавахишвили, Գշվ. աշխ., էջ 335, 337:

⁴⁶ Տե՛ս Գուլց տեղը, էջ 228:

о хозяйственной и социальной структуре древних обществ, а также уяснить некоторые проблемы, связанные с природными условиями и миграциями в древности.

В статье, посвященной особенностям архитектуры куро-аракской культуры, рассматриваются здания, имеющие прямоугольную планировку. Условно такие здания можно разделить на несколько групп: однокомнатные и многокомнатные здания удлиненной планировки, здания, имеющие квадратную и подквадратную планировку, а также прямоугольные здания с закругленными углами, сооруженные на основе тростникового каркаса и по планировке приближающиеся к мегарону.

Автор приходит к заключению, что традиция сооружения зданий, имеющих прямоугольную планировку, восходящая корнями в неолит, в эпоху ранней бронзы не только не прервалась, но и продолжала развиваться, охватив весь ареал куро-аракской культуры. Появилась также возможность определить районы распространения различных типов зданий и проследить их аналогии как в пределах распространения культуры, так и в сопредельных регионах.